ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

<ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-16/1> ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ Քննչական կոմիտեի կարիքների համար տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 28.12.2015թ. ժամը 14-00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ. Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Ա. Հակոբյանը, Վ.Պետրոսյանը, Վ. Հարությունյանը, Ա.Հովսեփյանը և քարտուղար Գ. Մանուկյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

<ՇՀԱՇՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-16/1> ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. «ՎԻԱՄԻՐ» ՍՊԸ (ք. Երևան, Կոմիտաս 37)
2. Արման Ասմանգուլյան Ա/Ձ (ք. Երևան, Ներսիսյան 1, 17)
3. Վարդան Մկրտչյան Ֆեոդորի Ա/Ձ (ք. Երևան, Հր. Քոչար 72., բն.62)
4. «ՑԱՍՈՆ» ՍՊԸ (ք. Երևան, Վրացական 16)
5. <Բեկոր-Հրատ> ՍՊԸ (ք. Երևան, Ազատության 21. Բն. 31)
6. <Հայկարլի> ՍՊԸ (ք. Երևան, Ն.Դումանի 1, բն. 56)
7. <Լուսաբաց հրատարակչատուն> ՍՊԸ (ք. Երևան,Պուշկինի 46)
8. <Միսմա> ՍՊԸ (ք. Երևան, Հանրապետության 49, 7/1)

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 28.18.2015թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Ընկերությունների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի

պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 Ընկերությունների կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

4. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

5. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վերաբերյալ

4.1 Հաշվի առնելով, որ ընկերությունների կողմից ներկայացված գնային առաջարկները 3, 4 և 6 չափաբաժինների համար գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, անհրաժեշտություն է առաջացել վարելու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝

Հանձնաժողովը որոշեց.

Նիստը հրավիրել 2016թ. հունվարի 11-ին, ժամը 11:00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում: